

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորական ուղերձը Ուսուցչի օրվա կապակցությամբ**

**04.10.2019թ**

Միբելի մանկավարժներ

Տարիների ու տասնամյակների ընթացքում ձեր ցանած մտավոր սերմերն առողջ ծիլեր են տվել՝ մեր հայրենիքին պարգևելով գիտության, կրթության, առողջապահության, արվեստի ու մշակույթի գործիչներ, արտադրության առաջավորներ, հայրենիքի պաշտպաններ, ազգային ու համամարդկային արժեքներով դաստիարակված սերունդներ: Դուք կաք մեր երկրի ամեն մի հաջողության ու առաջընթացի, ամենքիս կայացման ու նպատակների իրականացման մեջ, եւ այդ երախտագիտությունն ամեն օր փոխհատուցվում է ձեր աշակերտների հայրենանվիրությամբ, հանրային բարօրությանը նպաստելու հստակ քայլերով:

Նոր Հայաստանի ճանապարհը եւս լուսավորվելու է Սուրբ Մաշտոցի մտքով փայլատակած, հազարամյակների խորքերից ճառագող Հայոց դպրության անմար ջահով, որն այժմ պատվով ու պարտքի գիտակցումով կրում էք դուք:

Հայրենի կառավարությունը կգործադրի բոլոր ջանքերը, որպեսզի առաջիկայում դուք աշխատեք միանգամայն բարվոք ու արդիական պայմաններում, վաստակեք ըստ արժանվույն:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ուսուցչի օրվա առթիվ, մաղթում խաղաղ ու բարօր հայրենիք, աշխատանքային ու անձնական հաջողություններ:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան